

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

Կ. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լեզվի մեջ գաղափարներն ու հասկացություններն արտահայտվում են բառերի միջոցով: Պրանց մի մասի արտահայտման համար հատկացվում է մեկական, իսկ մյուսի համար՝ երկուական ավելի բառ, այսինքն՝ բառակապակցություն: Սրանք կայուն բառակապակցություններ են. կայուն են, որովհետև շարահյուսական տարրալուծման ու շրջման չեն ենթարկվում, նրանց կազմի մեջ մտնող բաղադրիչները չեն փոխարինվում այլ բաղադրիչներով և գործածվում են որպես պատրաստի միավորներ: Հայերենում կայուն բառակապակցությունների մեջ մտնում են երեք շերտ՝ հարադրություններ, բաղադրյալ բառեր, դարձվածներ:

Կայուն բառակապակցությունների, այդ թվում դարձվածների մի մասը արտահայտում է ոչ թե հասկացություններ, այլ խոսողի վերաբերմունքը, զգացմունքները: Այդպիսի դարձվածներն ունեն հուզաարտահայտչական բնույթ, խոսքի մեջ կատարում են զուտ եղանակավորող, խոսքը գունավորող դեր և նախադասության անդամներ չեն հանդիսանում: Վերցնենք հետևյալ օրինակները. «Հանեց սա, հանեց նա-մի ութ, ինը մարդ, վրա տասը, տերդ խնդա, Բաղդասար, վիճակն ընկավ ինձ»¹: Ահա նույն դարձվածը ոճական նրբին տարբերությամբ. «էս կանաչները տափակացնելով սողում եմ, արևն էլ վերևից էնպես է վառում, որ տերդ խնդա» (նույն տեղում): «Ասի, Ավագ, էս օքմին չի, արջ է: Թե՛ բո՛հ, է՛, չէ՛ պոզեր»²: Դարձյալ. «Մին էլ տեսանք մեր գիրքերից ձեն են տալիս. «ոեբյատա... ոնց ենք վազում՝ էլ դու պրծար»³:

Այս օրինակներում՝ «տերդ խնդա», «չէ, չէ պոզեր», «էլ դու պրծար» արտահայտում են խոսողի վերաբերմունքը՝ հեգնանք, թերահավատություն, զարմանք: Նրանք ընդհուպ մոտենում են ձայնարկություններին: Քանի որ այս դարձվածները լիովին կատարում են ձայնարկությունների ֆունկցիան, ուստի դրանք կարելի է կոչել եղանակավորող: Նույն այս ֆունկցիայով կան նաև այլ կարգի կայուն բառակապակցություններ, թեև ավելի սակավ, ինչպես՝ ի սեր աստծո, աստծու սիրուն, մատաղ լինեմ: Միայն եղանակավորող դարձվածներ մենք հաշվեցինք շուրջ 80 հատ:

Ի տարբերություն եղանակավորող այլ կայուն բառակապակցությունների, եղանակավորող դարձվածները ամբողջապես զրկված են իմաստից. դրանով նրանք շատ ավելի են նմանվում ձայնարկություններին, քան մյուս տիպի կայուն բառակապակցությունները: Ի՞նչ են արտահայտում այլ բեզ բան, աչխիս վրա, առեղ կծեմ դարձվածները. զարմանք, պատրաստակամություն, գոհունակություն: «Տեր-Ավետիսը թփթփացոնց հարյուրապետի մեջքը:

— Ղոչաղն ես, հա, առեղ կծեմ. դիմացար, ապրես...»⁴:

Հայտնի է, որ որոշ բառեր, լինելով քերականական քարացած ձևեր, գործածվում են ձայնարկության ֆունկցիայով: Օրինակ՝ «կեցցե՛», «հաոս՛ջ», «խնդրե՛մ»: Այս բառերում քերականական քարացածությունը պատճառ է եղել բառիմաստի մթազնման: Ահա նույն այս երևույթը կա դարձվածներում կատարելության հասած, այստեղ իմաստազրկված են ամբողջ բառակապակցություններ: Այլ կարգի կայուն բառակապակցություններում բառերի քարացած կիրառությունը, բառիմաստի մթազնմը մասնակի են: Ուրեմն և բաղադրյալ բառերը համեմատաբար հեռու են ձայնարկություններից: Ինչպես՝ մատաղ լինեմ (աղաչական, քնքշական), ցավդ տանեմ (խնդրական, սիրալիր):

Ինչպես ասացինք, եղանակավորող դարձվածներում բառային իմաստները ոչ միայն հանգած են, այլև, ի տարբերություն մյուս դարձվածների, այլաբանական իմաստ էլ չունեն, այլ զուտ զգացմունքային են: Սա է, որ նրանց մոտեցնում է ձայնարկություններին:

1 Ս տ. Զ ո Ր յ ա ն, Զրհորի մոտ, Երկեր, հատ. 2, էջ 516:

2 Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Արջաորս, Երկեր, հատ. 1, էջ 332:

3 Ս տ. Զ ո Ր յ ա ն, Զրհորի մոտ, Երկեր, հատ. 2, էջ 521:

4 Ս. Խ ա ն զ ա դ յ ա ն, Մխիթար սպարապետ, էջ 533:

Ինչպե՞ս են առաջացել այս դարձվածները: Ինչպե՞ս են նրանք կորցրել նաև այլարանական իմաստը: Նրանց մի մասը կրճատումներ են երբեմնի երկար ու իմաստավոր ձևերի: Հաճախակի կրկնության պահանջի հետևանքով այս ձևերը կարճացել են, մնացել են միայն բեկորները, որոնք միառժամանակ, սովորության ուժով, գիտակցվում էին, առաջվա նման իմաստ ունեին: Ապա, լնականաբար, այդ իմաստն էլ է կորչում, որովհետև բեկորներն իրենք այն չէին արտահայտում, մնում է միայն զգացմունքային կողմը: Այսպես, օրինակ. այժմ էլ գործածություն ունի գլուխը. Բաբին տալ (որևէ սխալ բան անել) դարձվածը: Նույն կրճատումից ունենք գլուխը Բաբը և դանա-կավորող դարձվածը, որ արտահայտում է անհոգություն, զայրույթ: Ինչպես՝

Վեր կենամ, ասի, մեկի մոտ գնամ,
Կրկին պարտք անեմ, գլուխը Բաբը.
Մինչև որ տեսնենք ինչ կլինի ճարը՝:

Այս օրինակում սկզբնաձևի իմաստը բոլորովին չի մնացել: Նման կրճատումներ են հուսա-հատական «էլ ինչ», «էլ ուր» դարձվածները: Լրիվ ձևերը եղել են՝ «էլ ի՞նչ կարող ես անել» կամ՝ «ուղղակի՝ «էլ ի՞նչ անես», «էլ ո՞ւր կարող ես գնալ», կամ՝ «էլ ո՞ւր գնաս»: Այս նախաձևերը սկզբնապես գործածվել են համապատասխան դեպքերում: Կրճատվելուց հետո իմաստազրկվելով, նրանք նշանակությամբ մոտեցել են իրար և այժմ լեզվում շփոթվելով՝ գործածվում են միմյանց փոխարեն: Կամ՝ գլխիդ մատաղ (աղաչական). գալիս է գլխիդ մատաղ լինեմ ձեռք, «մատաղ լի-նեմ» առանձին գործածություն ունի:

Գլխիդ մատաղ, սանամեր,
Մի ճար արա՝ շունչ առնեմ,
Ցրտից, սովից շմեռնեմ՝:

Հետաքրքրական են անեծքների կրճատումներից ստացված դարձվածները: Կրճատումից իմաստները կորցնելով, նրանք վերածվել են բացասական զգացումներ արտահայտող դարձված-ներ: Այդպես է գլխիդ ձյուն (անխելք), լրիվ ձևն է՝ գլխիդ ձյուն դա (հեգնական), սև անես (խղճահարություն), ասվում է անիրավության, արտասովոր, ոչ գովելի արարքի դեպքում: Լրիվ ձևը անշուշտ եղել է դիմում դեպի աստված՝ «սև անես այս մարդկանց օրը», «սև անես կյանքը»: ձևերի նմանողությամբ: Նվ կամ՝ անտե՛ր անեմ: Այս անեծքը այժմ էլ կարելի է լսել ժողովրդի մոտ որևէ իրի, կենդանու, երևույթի հասցեին: Աստիճանաբար այն վերածվել է զայրույթ-տրո-տունջ արտահայտող եղանակավորող դարձվածի (մասնավորապես՝ չարաբաղի բարբառում) և գործածվում է այնպիսի դեպքում, ուր բուն իմաստով հնարավոր չէ հասկանալ: «Անտեր անեմ հինչքան օգրմ ըմ թակիմ, վեր խրատվի, ձևոքս պըրցրանըմ չի»: Պարզապես տրտունջ է ար-տահայտում:

Կայուն բառակապակցություններն ու ասացվածքները հաճախակի կրկնության պատրաստի-միավորներ են: Այդ կրկնությունը պատճառ է դառնում, որ առանց կրճատման էլ թողնեն իրենց իմաստը և նորը ձևոք բերեն: Սա եղանակավորող դարձվածների առաջացման մեկ ուրիշ ճա-նապարհն է: Երբեմնի առեղ չստի օրհնանքը, որ այժմ էլ կարելի է լսել, բազում կրկնություն-ների պատճառով կտրվել է իր իմաստից և վերածվել խնդրանք արտահայտող դարձվածի: Երբեմնակ՝

Առեղ ասրի, շարչի ալակեր,
էդ անունը բերան մի բեր՝:

Մեկ այլ օրհնանք՝ մերը շմեռնի, որ ասվել է լավ օրինակի, արարքի դեպքում, անձնավո-րության մոր հասցեին, վերածվել է գովասանական դարձվածի: Ինչպես՝ «Հապա. մերը շմեռնի՞ Պետրոսի ձիերի,— ասում էր նա,— նրանց նման ձի որտե՞ղ կա... սրանք հրեղեն են, ոչ թե-ծիեր»:

5 Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Պոետն ու մուսան, Երկեր, հատ. 2, էջ 85:

6 Ա. Խ ն կ ո յ ա ն, Ժպուռն ու մրջյունը:

7 Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Քաղավորն ու շարչին:

8 Ստ. Զ ո Ր յ ա ն, Երկաթուղին, Երկեր, հատ. 1, էջ 139:

Մեր սևոնի անեծքը դարձել է արհամարհանք արտահայտող դարձված: «Մեր մեռնի Պետրոսի ֆուրգունի, որ մաշինեն նրա բանը պիտի անխճ»:

Հեռ օրհնած արտահայտությունն էլ, որ առաջներում, անշուշտ, գործածվել է իբրև քաղաքավարական ձև, քաղմաթիվ կրկնություններից հակառակ՝ դայրացական իմաստին է հասել:

Տո, հեռ օրհնած, էդպես ասա,
էլ բարկանալդ ինչի՞ս ա:

Յուրօրինակ է տունը (դ) շինվի և հոմանիշ՝ տունը (դ) շփանդվի դարձվածների ծագումը. Ձևականորեն վերլուծելիս՝ արտահայտած իմաստը դրական է, իսկ որպես եղանակավորող՝ հանդիմանական: Սա հայերենի սիրած միջոցն է, քաղցր դառնության միջոցով հանդիմանելու պահանջ կա, միայն թե ոչ շար խոսքերով: Նույն ձևով է կաղմվել զետնի երեսը ման դաս հանդիմանական դարձվածը:

Մի վերջին խմբի դարձվածներ էլ բառախաղային, կատակարարական ձևեր են՝ արեղ կծեմ, հողիդ ուտեմ, աչքը սիրեմ: Ինչպես. «Շատ վատ սովորություն է, որ մեր խոհանոցը փայտից ու տախտակից են շինում: Աչքը սիրեմ աղյուսի խոհանոցի, հեշ կրակից չի վախենում»¹:

Ծղանակավորող դարձվածները արտահայտում են զանազան զգացումներ, ըստ որում՝ այնպիսիք, որոնք շուրջն ձայնարկությունները, և գալիս են լրացնելու նրանց: Ըստ այսմ՝ եղանակավորող դարձվածները արտահայտում են.

1. Գովասանք-հավանություն՝ աչքը սիրեմ, արեղ կծեմ, ինչ եմ տվել, հողիդ սիրեմ, հողիդ ուտեմ, մերը շմեռնի: Ինչ եմ տվել դարձվածը, կարծում ենք, նախապես ասվել է էթանագին իրերի վերաբերյալ՝ ի հակադրություն թանկ ու անմատչելի իրերի: Բաղմաթիվ կրկնություններից ամրացել է գովասանական իմաստը, ապա գործածվել է բոլոր մյուս դեպքերում ևս, երբ գին կամ մատչելիություն չի ակնարկվում: Օրինակ՝ «Մի մեխը հանելով էս ահագին բանը (գնացքը) պիտի լենկնի, փշրվի, էլ ինչո՞ւ է... Ինչ եմ տվել ֆուրգունին: Մերը շմեռնի... նստի, բժերը ձեռք առ ու յալլա, ֆրոո...»¹:

2. Գովասանք-հավանություն ասածի վերաբերյալ՝ խոսի՛ր շաֆարով ուտեմ, ծիծաղաշարժ լինելու դեպքում՝ կրակ ուտես:

3. Դիմում-արհամարհանք՝ դուրծիդ կաց (գնա), բանիդ կաց (նայիր):

4. Դիմում-հանդիմանություն՝ հեռ օրհնած, մարդ աստծո:

5. Ձայրույթ-անփութություն՝ անտեւ անեմ, հերեմ անիծած (անիծեմ), զլուխը փարը:

6. Ձարմանք, շվարում (հայտնությունից, լուրից)՝ այ ֆեզ բան, դու մի ասա, արի ու տես, «Հալա (բա) չես ասի», վայ ֆու (տղիս) տղա: Բացառությամբ՝ «այ քեզ բան», «արի ու տես», որ ասվել են զիմացիներն զարմանալի, անհավատալի դիպվածը ցույց տալու համար, մյուսները ծագումնաբանորեն անստույգ են:

Ձարմացական (տեսարանից)՝ ոտքդ սլազնեմ, գործածվում է արևմտահայերենում: «Ոտքդ պաքենեմ, այս ինչ մեծ-մեծ ոտքեր ունի...»²:

7. Թերհավատություն՝ չէ, չէ սլոզեր (չէ մի սլոզեր): Ծագումն անհայտ է:

8. Խնդրանք-աղաչանք՝ արեղ ալբի, արեղ սիրեմ, արեղի կոտրիմ, արեղի մեռնիմ, զլխիդ մատաղ, զլխիդ մեռնիմ, զլխով ման գամ, զլխով սլոտյտ գամ (չոտ գամ), դու ֆո աստված, հողիդ սիրեմ, ֆո (ծեր) բախտն եմ: Անստույգ է «զլխով ման գամ»: «Դու քո աստված»՝ նախական ձևն է (ըստ «Հայերեն բացատրական բառարանի»)՝ դու և քո աստվածը, այսինքն թե՛ աստված պատժի, եթե խաբես կամ անարդար լինես: Հաճախակի կրկնությամբ ու մասնակի ձևափոխությամբ ստացվել է խնդրանքի իմաստ:

9. Համոզում՝ այստեղ մտնում են երբեմնի երդումների մաշված ձևերը, իմաստադրված, որ միայն համոզում են արտահայտում: Արեղ զիտեմա (Թրիլիսիի բարբառ), իմ արե, ֆո արե (դուրս են ընկել «վկա», «գիտենա» բառերը), ես ու իմ աստված, ըստ «Հայերեն բացատրական բառարանի»՝ «Ես ու իմ աստվածը, աստված ինձ պատժի, երե խաբեմ կամ անարդար լինեմ»: «Ես իմ աստված, տեղն ա, որ ձեր մեծ ախպորը մի շոփ ավել շտաք...»³:

9 Նույն տեղում:

10 Թ. Պ ա տ կ ա ն յ ա ն, Նոր տուն և հին տուն, Երկեր, մեկ հատորով, էջ 630:

11 Ս տ. Ձ ո Ր յ ա ն, Երկաթուղին, Երկեր, հատ. 2, էջ 144:

12 Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ»-ի հիման վրա գրված պիեսից:

13 Պ. Պ ո ռ չ յ ա ն, Հացի խնդիր, Երկեր, հատ. 1, էջ 327:

10. Հանդիմանություն-զարմանք՝ տունդ (ֆո տունը) շինվի, տունդ (ֆո տունը) շինվի, ղետինը ման զաս:

11. Հեգնանք-ծաղր՝ տերո խնդա, մերը մեռնի:

12. Հուսահատություն՝ էլ ի՞նչ, էլ ո՞ւր, ո՞վ կտա (էլ ո՞վ կտա): «Ծառի վրա կուշ է գալիս, ու նազարն ո՞վ կտա» (Թումանյան):

13. Նախատինք՝ էսքան հանես, մուրս ի վրադ, հույր մեկի զլիսին: Առաջին երկուսը ան-
ւտույզ են:

14. Նախատինք՝ անմիտ, հիմար նշանակությամբ՝ զլիսիդ (խելիդ) ձյուն, խելիդ զլուխս, խելիդ սիրեմ, խելի բուն, խելիդ դուրս պաղենմ, խելիդ պուտուկը սիրեմ, խելիդ տունը սի-
ւեմ, խելի ծով, խելի սլուտուկ. խելի տոպրակ. բեռսկինդ վաներ:

15. Զափազանցում-զարմանք՝ էլ դու պե՞ծաւ (անստույգ է), էլ մի ասա:

16. Պատրաստակամություն՝ աչիս վրա, զլիս վրա, երկուսն էլ շատ տարածված են Արևել-
քի ժողովուրդների մոտ՝ բառացիորեն նույն ձևով, այնպես որ դժվար է ասել, թե ով ումից է
փոխ առել: Ինչպես. թրք. բաշըմ ^{ուստա}, «գյոզըմ ^{ուստա}», արաբ. «ալա ալնի», «ալա բաասի»,
պարսկ. «բերուն շաշմ», վրաց. «չեմ թավգես»: Ինչևիցե, երկուստեք անստույգ են: Թերևս ուզում
է ասել առաջարկվածը, ասածը աչքի, գլխի վրա լինի, աչքի, գլխի վրա է ընդունում:

17. Վերհուշ՝ Հեյ գիտի, այ գիտի: Անստույգ է:

Հեյ գիտի օրեր, որտե՞ղ եք կորել,
ես շատ եմ էնտեղ որսի միս կերել:
(Թումանյան, «Սասունցի Դավիթ»):

18. Վիշտ-կարեկցություն՝ սե անես, սե մնաս:

19. Փաղաթշական՝ բալան կծեմ, հոգիդ ուտեմ: «Բալան կծեմ» անստույգ է, գործածվում
է Գորիսի խոսվածքում և Ղարաբաղի բարբառում: Ինչպես՝ «Ցավա՞ց, բալան կծեմ, հա՞, ցա-
վա՞ց» (Վաղարշ Վաղարշյան, «Օղակում»):

20. Քաղաքավարություն՝ խոսիդ շափառով (մեղրով) կտրեմ: «Կտրեմ» բառը աստիճանա-
բար դուրս է ընկնում: